

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ

Հայագիտական միջազգային համաժողով հրավիրելու գաղափարը վաղուց էր հասունացել: Եվ դրա անհրաժեշտությունը ավելի սուր էր զգացվում վերջին տասնամյակում, երբ հայ ժողովուրդը, թոթափելով միակուսակցական գաղափարախոսության քաղաքական սահմանափակումներն ու կաղապարները, բռնեց անկախության ուղին, թևակոխեց ճոր դարաշրջան, սկսեց ինքնուրույն կերպով կառուցել իր երկիրն ու ամրապնդել պետականությունը:

Ստեղծված ճոր իրավիճակում հատկապես հումանիտար ու հասարակական գիտությունների առջև դրվեցին լուրջ խնդիրներ: Հայագիտությունը ևս չէր կարող զերծ մնալ նման տեղաշարժերից ու փոփոխություններից: Նոր առաջադրվող ճիմնահարցերը և տասնամյակներ շարունակ հայագիտության ասպարեզում ծառայած խնդիրները սպասում էին իրենց լուծմանը: Հայաստանի, Սփյուռքի և օտարագի հայագետների շրջանում բազմաթիվ ճոր հարցեր էին ծագել, միևնույն հարցերի շուրջ տարբեր կարծիքներ էին հնչում. հաճախ՝ միմյանց հակասող: Խորհրդային տարիների բացթողումներն ու վրիպումները իրենց բացասական ազդեցությունն էին թողել ինչպես հայագիտության զարգացման, այնպես էլ Հայաստանի և Սփյուռքի մտավորականների համագործակցության ու հարաբերությունների վրա:

Ժիշտ է, հայագիտական միջազգային գիտաժողովներ ինչպես Երևանում, այնպես էլ աշխարհի մի շարք խոշոր քաղաքներում կազմակերպվել էին, սակայն դրանք կրել էին նպատակային բնույթ՝ որոշակի թեմատիկ ուղղվածությամբ: Համընդհանուր, համահավաք, հայագիտության բոլոր ոլորտներն ընդգրկող և աշխարհի հայագիտական բոլոր կենտրոններից մասնակիցներ ունեցող համաժողով դեռևս չէր կազմակերպվել: Ուստի, առաջացած ճիմնահարցերը համատեղ քննար-

կելու և դրանց պատասխանները միասին գտնելու անհրաժեշտության թելադրանքով տարբեր հավաքներում, հատկապես անցյալ տարի Երևանում գումարված «Հայաստան - Սփյուռք» երկրորդ խորհրդաժողովի ընթացքում մի շարք պատվիրակությունների կողմից առաջարկվեց կազմակերպել հայագիտական միջազգային համաժողով:

Այդ հույժ կարևոր համաժողովի կազմակերպման նախաձեռնությունն ստանձնեցին հատկապես Երևանի պետական համալսարանը և Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան: Դեռևս 2002 թ. սեպտեմբերին ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ Ֆ. Սարգսյանի և ԵՊՀ ռեկտոր Ռ. Մարտիրոսյանի համանախագահությամբ ստեղծվել էր խորհուրդ, որի ջանքերով անցած մեկ տարվա ընթացքում լուրջ աշխատանքներ էին կատարվել Երևանում առաջին անգամ միջազգային հայագիտական համաժողով հրավիրելու ուղղությամբ:

Հիշյալ խորհրդի կողմից Սփյուռքի և աշխարհի շուրջ 280 հայագետների հրավերներ էին ուղարկվել համաժողովին մասնակցելու համար, ստացվել էր 140 դրական պատասխան: Շուրջ 25 երկրներից՝ Ռուսաստանից ու ԱՄՆ-ից, Անգլիայից ու Ֆրանսիայից, Գերմանիայից ու Իտալիայից, Կանադայից ու Իռլանդիայից, Շվեյցարիայից ու Բելգիայից, Հոլանդիայից ու Իսլանդիայից, Ուկրաինայից ու Վրաստանից և այլ երկրներից, համաժողովին մասնակցելու հայտ էր ներկայացրել շուրջ 200 հայագետ: Սակայն, ցավոք, նրանց մի մասը (հիմնականում բուհական ակտիվ և ծանրաբեռնված շրջանի պատճառով) չէր կարողացել ներկայանալ գիտաժողովին: Բայց և այնպես 88 գիտնականներ 14 ուղեկիցներով ժամանել էին Հայաստան, որոնց թվում՝ նշանավոր պատմաբաններ ու բանասերներ, հնագետներ ու ազգագրագետներ, արվեստաբաններ ու իմաստասերներ, մշակութաբաններ

ու հայ եկեղեցու պատմության մասնագետ-ներ:

Ամհրաժեշտ է նշել նաև, որ համաժողովի կազմակերպման վրա պետությունից գումարներ չէին ծախսվել. ֆինանսական աջակցություն ցուցաբերել էին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, Ռուսաստանի հայերի միությունը, ԵՊՀ բարեկամների միությունը (ԱՄՆ), «Ջորջ Իգնատիոս» հիմնադրամը, «Գիտության և առաջատար տեխնոլոգիաների ազգային հիմնադրամը» և մի քանի այլ կազմակերպություններ:

Համաժողովի հիմնական նպատակն էր համախմբել ամբողջ աշխարհի հայագետներին, սերտացնել արտերկրի և Հայաստանի հայագիտական հաստատությունների միջև եղած կապերը, ուղիներ մշակել առաջացած խնդիրները լուծելու և հայագիտությունը հետազայում զարգացնելու համար: Առանձին գրքույկներով հրատարակվել էին նաև համաժողովի ծրագիրն ու զեկուցումների թեզիսները, ինչպես նաև մի շարք շքեղ ազդագրեր, ցուցապատումներ ու հրավիրատոմսեր:

Այսպիսի լայնածավալ նախապատրաստական աշխատանքներից հետո, ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի հովանավորությամբ և Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Հայրապետի օրհնությամբ, սեպտեմբերի 15-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում բացվեց իր նախադեպը չունեցող՝ «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» թեմայով համաժողովը: Մայր հայրենիքում հայագիտական մտքի երեք բաղադրիչ մասերը ներկայացնող՝ Հայաստանի, Սփյուռքի և արտասահմանի երևելի գիտնականներն առաջին անգամ հավաքվել էին՝ համատեղ քննելու հայագիտության՝ որպես գիտության մի կարևոր ճյուղի արդի վիճակը, պատասխանելու վաղուց հասունացած հարցերին, առաջադրելու հետազոտություններ կատարելու նոր ու արդյունավետ մեթոդներ և ուղիներ:

Ողջունելով համաժողովի մասնակիցներին՝ ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը իր բացման խոսքում

նշեց, որ համաժողովը կոչված է իրականացնելու մի կարևոր առաքելություն՝ համախմբել Հայաստանի, Սփյուռքի և արտասահմանի հայագետներին, ամրապնդել և սերտացնել նրանց համագործակցությունը: Իսկ դա հնարավոր է դարձել քաղաքական նոր իրողության՝ Հայոց անկախ պետության ստեղծման շնորհիվ, որը թույլ է տալիս գիտական հարցերը քննել առանց քաղաքականացման ու կուսակցականացման: Իսկ այսօրվա հայագետների առջև դրված են հարցեր, որոնք անմիջականորեն առնչվում են հայ ժողովրդի ծագման, ազգային ինքնության պահպանման, հայոց պետության ու եկեղեցու, սոցիալ-տնտեսական համակարգի, նոր պայմաններում ազգային ինքնագիտակցության ձևավորման, ազգային-ազատագրական պայքարի և այլ հիմնախնդիրների հետ:

Համաժողովի մասնակիցներին ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանի ուղերձն ընթերցեց գիտաժողովի համանախագահ, ԵՊՀ ռեկտոր, ակադ. Ռ. Մարտիրոսյանը. «Ողջունում եմ Հայագիտական առաջին միջազգային համաժողովի մասնակիցներին և հյուրերին, - ասված էր այնտեղ: - Այս գիտաժողովը նշանակալի իրադարձություն է մեր երկրի հասարակական կյանքում: Հայաստանի անկախացումից ի վեր առաջին անգամ է հրավիրվում մեզ միջազգային ընդգրկում և ներկայացուցչական կազմ ունեցող համաժողով: Օրինաչափ է, որ համաժողովը տեղի է ունենում Երևանում, որը պետք է լինի ոչ միայն անկախ Հայաստանի, այլև հայագիտության մայրաքաղաք:

Ուրախ եմ, որ Գիտությունների ազգային ակադեմիան և Երևանի պետական համալսարանը ստանձնել են այս կարևոր միջոցառման կազմակերպման շնորհակալ գործը:

Ողջունելի է, որ համաժողովին մասնակցում են մեծ թվով օտարերկրյա հայագետներ: Մենք նրանց ընդունում ենք որպես Հայնրիխ Հյուբշմանի, Անտուան Մենյեի և մյուս մեծ հայագետների գործի արժանի հետևորդների: Սա վկայում է, որ հայագիտությունը շարունակում է մնալ միջազգային գիտական մտքի կարևոր ուղղություններից մեկը:

Հուսով եմ՝ համաժողովը հնարավոր

րություն կտա մեկտեղելու ջանքերը և, ի թիվս գիտական խնդիրների, նաև մշակելու հայագիտության զարգացման ծրագիր: Պետությունը կարող է իր աջակցությունը բերել այդ ծրագրի իրականացման աշխատանքներին:

Հայագիտական միջազգային համաժողովին մաղթում եմ բարի երթ, գիտնականներին՝ բեղմնավոր գիտական գործունեություն:

Այնուհետև հայրապետական իր օրհնությունը հայագետներին հղեց Ամենայն հայոց կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ-ը՝ բարի ընթացք մաղթելով համաժողովի աշխատանքներին:

Ընթերցվեց նաև Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա կաթողիկոսի «քրիստոնեական ջերմ սիրով և ազգային ապրումներով» հագեցած հայրապետական օրհնանքի խոսքը:

Համաժողովի հովանավորներից Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանը նույնպես ողջունեց հայ և արտասահմանցի հայագետներին:

Համաժողովի մասնակիցներին ողջույնի խոսք ասացին նաև ՀՀ Ազգային Ժողովի կրթության, գիտության, երիտասարդության հարցերի և սպորտի մշտական հանձնաժողովի նախագահ Հր. Հակոբյանը և ՀՀ ԿԳ նախարար Ս. Երիցյանը: Այնուհետև միջազգային հայագիտական համաժողովի առաջին լիագումար միստոմ ընդհանրական զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադ. Վ. Բարխուդարյանը և ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ռ. Հովհաննիսյանը (ԱՄՆ):

Նրանցից առաջինը ներկայացրեց Հայաստանում հայագիտության արդի վիճակը՝ հանգամանալից անդրադառնալով նաև հայագիտական մտքի զարգացման ընթացքին, հայագիտության գրեթե բոլոր ճյուղերին՝ պատմություն, բանասիրություն, ճարտարապետություն, երաժշտություն, թատերագիտություն և այլն: Բարձր գնահատելով արդեն իսկ խորհրդային շրջանում ձեռք բերված նվաճումները (պատմական որոշակի ճշմարտությունների վերաբարձեքավորում, որոշ հեղինակների հանդեպ տասնամյակներով որդեգրված ոչ ճիշտ մոտեցումների հաղթահարում, հան-

րագիտարանների, քառարանների, արժեքավոր մենագրությունների, բանահյուսական մի շարք ժողովածուների հրատարակում, դեկորատիվ կիրառական արվեստին, հայ թատրոնի 2000-ամյա պատմությանը նվիրված գրքերի տպագրություն և այլն)՝ զեկուցողը, այնուամենայնիվ, խիստ քաղաքականացված համարեց խորհրդային տարիներին ստեղծվածը: Ըստ նրա, Հայաստանի Հանրապետության ծնունդով միայն հայագիտությունը մայր հայրենիքում ազատորեն զարգանալու հնարավորություն ստացավ: Այդ ազատությունը, նշեց նա, պարտավորեցնում է հայագետներին ուշադրություն դարձնել այնպիսի կարևոր ու արդիական նշանակություն ունեցող խնդիրների վրա, ինչպիսիք են Հայաստանի երեք Հանրապետությունների պատմության ճշմարտացի լուսաբանումը, հայոց պատմության ատլասի ստեղծումը, հայերենին չտիրապետող զանգվածին ուսուցանելու նպատակով մայրենի լեզվի դասագրքերի հրատարակումը, հայ ժողովրդին աշխարհին ներկայացնելու նպատակով փաստական գրականության ուսումնասիրությունը և օտար լեզուներով դրանց տպագրումը և այլն:

Սկյուռքահայ անվանի պատմաբան Ռ. Հովհաննիսյանն արտասահմանում հայագիտության արդի վիճակի և զարգացման հետազոտողների մասին իր զեկուցումը վերնագրել էր «Հայագիտությունը՝ խաչմերուկում»՝ դրանով իսկ շեշտելով այն մտահոգությունը, որ թեև վերջին շրջանում հայագիտությունն ակնառու հնչեղություն է ձեռք բերել և այդ ասպարեզում զգալի առաջընթաց է նկատվել, այնուամենայնիվ, ետ նայելով և ի մի բերելով նվաճումները, ժամանակն է լրջորեն մտածել հետագա անելիքների մասին:

Հաճախ տպավորություն է ստեղծվում, նշեց զեկուցողը, թե մենք զրուցում ենք ինքներս մեզ հետ, քանզի Միջին Արևելքի պատմության հետազոտողների և նույնիսկ սլավոնագետների համար հայագիտությունը մնում է ուսումնասիրման երկրորդական խնդիր: Սակայն անհրաժեշտ է մեծ ջանքեր գործադրել՝ հայագիտությունը տարածաշրջանային ավելի բազմազան ասպարեզներում ներառելու համար, ավելացրեց նա:

Չեկուցողը ցանկալի համարեց, ըստ Արևմուտքում մշակված մոդելի, ստեղծել կենտրոն, որը կարող է միավորել տարբեր հաստատություններում իրականացվող հետազոտական և ուսումնական թեմաները՝ կազմելով հայագիտության համապարփակ ծրագիր:

Նա ասաց նաև, որ հայագիտության քննազավտի գիտնականների համար, անկախ այն բանից, թե նրանց կրթությունը հայկական է թե ոչ, և արդյոք նրանք հետաքրքրվում են Հայաստանի ներկայիս քաղաքական խնդիրներով, թե՞ ոչ, շատ կարևոր է հայկական պատմամշակութային փորձը համաշխարհային պատմության և մարդկային հավաքական հիշողության մաս դարձնելը:

Լիազումար միտի ավարտից հետո համաժողովի աշխատանքները շարունակվեցին պատմության, բանասիրության, մշակույթի և փիլիսոփայության ու «Հայոց եկեղեցին և հայագիտությունը» ըստ վաղորոք նախատեսված մասնաճյուղերի, ինչպես նաև աղբյուրագիտության, արվեստագիտության ենթամասնաճյուղերում: Կլոր սեղաններում քննարկումներ ծավալվեցին «Հայկական ինքնության խնդիրը և հայապահպան գործունեությունը Սփյուռքում» և «Կրթության հիմնախնդիրը Սփյուռքում և Հայաստանում» հիմնահարցերի շուրջը:

Նիստերն ընթացան ՀՀ ԳԱԱ նախագահության, պատմության, արևելագիտության և արվեստի ինստիտուտների դահլիճներում, Երևանի պետական համալսարանի համապատասխան ֆակուլտետներում և Մատենադարանում: Ծուրջ մեկ շաբաթ (սեպտեմբերի 16-20-ը) տևած համաժողովի ընթացքում քննարկվեցին հայագիտությանն առնչվող բազմաթիվ ուշագրավ ու հետաքրքիր հարցեր, շոշափվեցին հայ ժողովրդի լինելիության, ազգային ինքնագիտակցության, հայոց լեզվի, հայ արվեստի ու մշակույթի հետ առնչվող բազմապիսի խնդիրներ: Հայաստանի, Սփյուռքի և օտարազգի գիտնականները յուրովի ներկայացրին հայագիտության արդի վիճակը և նրա առջև ծառայած կարևորագույն խնդիրները:

Եվ այդպես, համայն աշխարհի հայագետներին հայրենի հողի վրա մեկտեղվելու, միմյանց տեսնելու և ճանաչելու բացառիկ հնարավորություն ընձեռող առիթը՝ «Հայագիտության արդի վիճակը և զարգացման հեռանկարները» միջազգային համաժողովը, սեպտեմբերի 20-ին ավարտվեց: Երևանի պետական համալսարանի մեծ դահլիճում տեղի ունեցած լիազումար եզրափակիչ միտումնամտ փակվեցին չորս մասնաճյուղերի և իճը ենթամասնաճյուղերի, ինչպես նաև «կլոր սեղանների» աշխատանքների արդյունքները: Խոսվեց և՛ ձեռքբերումների, և՛ թերությունների մասին:

Պատմության մասնաճյուղը ներկայացնելիս մասնաճյուղի ղեկավար հանձնախմբի անդամ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը նշեց, որ այս մասնաճյուղում ընթերցված 26 զեկուցումները երկու ուղղություն ունեին. դրանց մի մասը հայոց պատմության զանազան հարցերին էին վերաբերում, մյուսները քննության էին առնում հայագիտության վիճակն ու խնդիրները: Հնգօրյա քննարկումները ցույց տվեցին, նշեց նա, որ բազում անելիքներ կան և՛ աղբյուրագիտության, և՛ ժողովրդագրության զարգացման ասպարեզներում: Ծատ աղբյուրներ, որոնք կարող էին հիմք հանդիսանալ հետագա ուսումնասիրությունների համար, շարունակեց նա, ժամանակին չեն հրատարակվել. առայժմ լիարժեք ներկայացված չէ նաև մեր դասական մատենագիտությունը: Իսկ ինչ վերաբերում է ժողովրդագրությանը, ապա այն, ինչպես հարկն է, դեռևս ուսումնասիրված չէ:

Բանասիրության մասնաճյուղում, որը ներկայացրեց ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բանասիրական գիտությունների դոկտոր Ա. Եղիազարյանը, 39 զեկուցում է կարդացվել, նշեց նա, որոնցից 17-ը՝ արտասահմանցի հայագետների կողմից: Բանասերները հատկապես հրատապ են համարում հայ գրականությանն նոր պատմության ստեղծման անհրաժեշտությունը, որն ավելի տեսական ընդհանրացումներ կանի, հայ գրականությունը կդիտարկվի համաշխար-

հային գրականության ֆոնի վրա, և որում իր ուրույն տեղը կզբաղեցնի սփյուռքահայ գրականությունը: Հայոց լեզվի այսօրվա զարգացումները և արևմտահայ ու արևելահայ ճյուղերի հարաբերության խնդիրը եղել է հատկապես լեզվաբանների ուշադրության կենտրոնում, շարունակեց ելույթ ունեցողը: Սակավաթիվ էին բանահյուսությանը վերաբերող թեմաները, սակայն եղածն էլ բավական էր եզրակացնելու համար, որ այս ոլորտում ձեռք են բերվել որոշակի նվաճումներ, և հիմքեր կան բանասիրության այս ճյուղի հետագա զարգացման համար: Իսկ ինչ վերաբերում է հայոց լեզվի երկու ուղղագրությունների խնդրին, ավելացրեց բանախոսը, որը, որքան էլ ցանկանային, անհնար էր շրջանցել, ասա այս կապակցությամբ ծավալված բուռն վեճերը հանգում էին երկու տեսակետի: Առաջին, որ տարբեր ուղղագրությունների առկայությունը սփյուռքին վնասում է, և պետք է հատուկ համաժողով հրավիրել ուղղագրության խնդիրը քննարկելու համար: Երկրորդ՝ չսրել այդ խնդիրը, այլ սստեցնել, թույլ տալ, որ ժամանակն իր վճիռը թելադրի, քանզի այն առայժմ ճակատագրական խնդիր չէ, և կան շատ ավելի հրատապ հարցեր, ինչպես, օրինակ, բուն հայոց լեզվի պահպանումը:

Մշակույթի և փիլիսոփայության մասնաճյուղի աշխատանքները ամփոփեց Մատենադարանի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Արևշատյանը: Նրա ելույթից պարզվեց, որ այս մասնաճյուղը եղել է ամենաընդգրկունը: Ընթերցվել է 60 զեկուցում մշակույթի 46 տարբեր ճյուղերի ներկայացուցիչների կողմից: Համաձայնելով նախորդ ելույթ ունեցողների հետ, թե մասն համաժողովները անհրաժեշտություն են, բանախոսը առավել կարևորեց նեղ մասնագիտական ուղղություններով կազմակերպվելիք գիտաժողովները: Այնուհետև նա անդրադարձավ մշակույթի մասնաճյուղի եզրափակիչ միսսում արձանագրված ձեռքբերումներին, խոսեց բնագրերի հրատարակության, մեծագրական աշխատանքների ստեղծման մասին, որոնք, իր բնորոշմամբ, թելադրվում են կուսակցական զաղափարախոսության կապանքներից ձերբազատվելու պահանջով:

ԵՊՀ Աստվածաբանության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ծախե արքեպիսկոպոս Աճեմյանն ամփոփեց «Հայոց եկեղեցին և հայագիտությունը» մասնաճյուղի արդյունքները: Նա համաժողովը գնահատեց որպես լավ կազմակերպված և գոհուճակություն հայտնեց հայոց եկեղեցին՝ մասն համաժողովում առաջին անգամ ներկայացված լինելու առթիվ: Այս մասնաճյուղում հատկապես խոսվել է եկեղեցու պատմության, աստվածաբանության, սրբերի վարքերի և այլ հարցերի մասին: Այսուհանդերձ, արքեպիսկոպոսը ցանկություն հայտնեց, որ հաջորդ մասն համաժողովների ժամանակ ավելի լայն տեղ տրվի եկեղեցուն՝ հին հայերենի՝ գրաբարի, հայոց պատմության հիմնախնդիրների և մի շարք այլ հարցեր քննարկելու համար: Ելույթ ունեցողը նշեց նաև, որ մասնաճյուղը առաջարկում է ստեղծել հայագիտական միջազգային կազմակերպություն, որը կարող է հրատարակել նաև հանդես, ուր կներկայացվեն հայագիտության արդի հիմնախնդիրները վերահանող նյութեր:

Ի դեպ, իրենց եզրափակիչ խոսքերում ելույթ ունեցողները նշեցին նաև մի շարք թերություններ, որոնք թեև ստվեր չեն կարող ձգել համաժողովի անգնահատելի դերի և նշանակության վրա, այդուհանդերձ խելամիտ կլինի հաշվի առնել դրանք հետագա մեծատիպ գիտաժողովներ կազմակերպելիս: Նախ՝ գրեթե բոլորն էլ նշում էին, որ չափից ավելի մեծ էր զեկուցումների թիվը, ընդ որում՝ դրանց մի մասի անհրաժեշտությունն ամենևին չկար, որովհետև դրանցում առաջ չէր քաշվում որևէ կարևոր հիմնախնդիր և որևէ նորություն չէին բերում: Տարակուսանք էր առաջացրել մեծ միջազգային համաժողովին ոչ բնորոշ մի հանգամանք ևս՝ թարգմանչի բացակայությունը: Բնական է, որ բոլորը չէ, որ տիրապետում են և՛ հայերենին, և՛ անգլերենին (զեկուցումները հիմնականում այդ երկու լեզուներով էին):

Գիտաժողովի կազմակերպական խնդիրներից զատ, հատկապես հայրենաբնակ հայագետներին հուզում էր գիտության ֆինանսավորման հարցը: Նշվեց, որ հայագիտական կենտրոնների, գիտաշխատողների խորհրդանշական բնույթ կրող

վարձատրության դիմաց տիտանական աշխատանք է կատարվում, ստեղծվում են ծանրակշիռ արժեքներ: Եվ, ինչպես Ս. Արևշատյանը բանաձևեց, «հայագիտությունը կարոտ է պետական հովանավորության», առանց որի կլինեն կորուստներ, իսկ հայագետների ծերացման գործընթացը և նոր կարգերի պակասն արդեն տագնապեցնող են:

Միջազգային համաժողովում, ծրագրված միստերից բացի, նախատեսված էին երեք «կյոր սեղան»-ներ: Դրանցից առաջինը վերաբերում էր տարածաշրջանային զարգացումների համակարգում Հայաստանի տեղին ու դերին: ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆ. Ն. Հովհաննիսյանն իր հաղորդման մեջ նշեց, որ, ըստ էության, այդ «կյոր սեղանը» միակնիստն էր, որ նվիրված էր ժամանակակից հայագիտության խնդիրներին: Նիստը հաջողված համարելով՝ նրա դեկավարը ներկայացրեց դրա տրամաբանական եզրակացությունը. Հայաստանն արհամարհելի գործոն չէ և ունի իր ծանրակշիռ տեղը տարածաշրջանում: Նա նաև առաջարկեց գործառնության մեջ դնել մի նոր տերմին՝ «Ամենայն հայոց պետություն»: Օգտվելով պատեմ առիթից՝ բանախոսը հիշեցրեց Ջոն Քենեդու վերաբերմունքը գիտության հանդեպ. ըստ որի՝ եթե պետությունն ուզում է ուժեղ լինել, պիտի հենվի գիտության վրա: Մինչդեռ մեր երկրում պետության և գիտության միջև կապը թույլ է, շեշտեց նա, միաժամանակ գտնելով, որ գիտնականներն իրավունք ունեն «պետությունից պահանջել և ոչ թե խնդրել»: Նա նշեց նաև, որ Հայաստանը մեծ ներուժ ունի, և իշխանությունները պարտավոր են հաշվի նստել այդ ուժի հետ:

Համաժողովի մասնակիցների մեկ այլ խումբ «կյոր սեղանի» շուրջ էր հավաքվել՝ քննարկելու Սփյուռքում հայապահպան գործառույթները և հայկական ինքնության խնդիրը: «կյոր սեղանի» նախագահողներից ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Պողոս Լևոն Ջեքիյանը նշեց, որ չնայած չորս զեկույցներից ընթերցվեց միայն մեկը (Լևոն Աբրահամյան. «Հայոց ինքնությունը ազգի արդի տեսությունների համատեքս-

տում»), սակայն իր համապարփակ բնույթով այն բազմաթիվ հարցերի պատասխանները տալու հավակնություն ուներ: Նիստի մասնակիցները հատկապես շեշտել են Հայաստանի և Սփյուռքի փոխադարձ պատասխանատվության պահը՝ ցավով նշելով, որ սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի լուծարումը սխալ է եղել, նշվել են նաև կրթության ոլորտում համահայկական դասագրքեր ստեղծելու կարևորության և այլ խնդիրների մասին:

Երրորդ «կյոր սեղանի» արդյունքներն ամփոփեց կրթական բարեփոխումների կենտրոնի տնօրեն Վ. Մարտիրոսյանը: Այս «սեղանի» շուրջ հավաքվածները, նշեց նա, մտքեր են փոխանակել Սփյուռքում և Հայաստանում կրթության հիմնախնդրի վերաբերյալ: Խոսվել է գործող կրթական կառույցների, դրանց արդի վիճակի, Հայաստան-Սփյուռք կրթական կապերի և այլ հարցերի շուրջ: Առավել ակներև դարձնելու համար այն փաստը, որ սփյուռքում գնալով փոքրամում է հայոց լեզուն պահպանողների, ազգային ինքնագիտակցություն ունեցողների թիվը՝ ելույթ ունեցողը օրինակ բերեց միստում հնչած զեկույցումներից մեկում (Ռոբերտ Տեր-Մերկերյան, Ֆրանսիա) վկայակոչված այն ցավալի իրողությունը, թե Մարսել քաղաքում և նրա շրջակայքում ապրող 70-80 հազար հայերի ընդամենը 0,5 տոկոսն է, որ ոչ միայն գիտակցում է իր հայ լինելը, այլև ակտիվորեն լծված է հայապահպանության գործին: Ազգային ինքնագիտակցության պահպանման խնդրում կարևորելով կրթական հաստատությունների դերը, կամուրջների ստեղծումը Հայաստանի և Սփյուռքի կրթական դաշտերի միջև՝ ելույթ ունեցողը նշեց նաև, որ և՛ մեզանում, և՛ դրսում առկա են լուծման կարոտ շատ խնդիրներ, որոնք վերաբերում են լեզվի, լեզվամտածողության, ազգային նկարագրի, հոգեբանության պահպանմանը և այլ ոլորտների:

ՀՀ ԿԳ նախարար Ս. Երիցյանը, հաջողություններ մաղթելով համաժողովի մասնակիցներին, վստահեցրեց, որ պետությունը այսուհետև պիտի ձգտի իրականություն դարձնել այն ամենը, ինչի անհրաժեշտությունը զգում են հայագետները: Հայա-

գիտությունը նաև մեր անկախ պետականության հաղթանակի գրավականներից մեկն է, վերջում շեշտեց նա:

Ամփոփելով համաժողովի արդյունքները՝ ՀՀ ԳԱԱ փոխնախագահ, ակադ. Վ. Բարխուդարյանը խոսեց նրա բարձր կազմակերպվածության, արդյունավետ և նպատակալից աշխատանքի մասին, վերհանեց նրա կարևոր նշանակությունը հայագիտության հետագա զարգացման գործում: Նա նաև ուրախությամբ ընդգծեց, որ ներկա գիտաժողովի անցկացումը համընկնում է Հայոց ազգային ակադեմիայի 60-ամյակի հետ: Ապա ավելացրեց, որ համաժողովի խորհուրդը անցած օրերին ստացել է 18 դիտողություններ ու առաջարկություններ: Հաշվի է առնվել դրանց մի զգալի մասը: Դրանք առավելապես միտված են հայագիտության ընդհանուր վիճակը բարելավելուն, աշխատանքները ճիշտ կազմակերպելուն:

Վերջում համաժողովն ընդունեց բանաձև, որն ըստ էության առաջիկա տարիների համար հայագիտության զարգացման ուղենշային ծրագիր պիտի հանդիսանա: Այդ բանաձևի կարևոր կետերից են՝ հայագետների միջազգային ընկերակցության ստեղծումը, հայագիտական միջազգային կենտրոնի կազմակերպումը Հայաստանում, որն ունենալու է նաև իր մասնաճյուղերը Սփյուռքում, ինչպես և «Հայագիտական հանդես» ստեղծումը և այլ միջոցառումներ:

Իր եզրափակիչ խոսքում գիտաժողովի համանախագահ, ԵՊՀ ռեկտոր, ակադ. Ռ. Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնեց բոլոր մասնակիցներին՝ հրավերն ընդունելու և համաժողովին մասնակցելու համար և նշեց, որ արդեն պատմություն դարձող հայագիտական միջազգային համաժողովի ամենամեծ նվաճումը այն էր, որ մեր երիտասարդները հնարավորություն ունեցան շփվելու ականավոր հայագետների հետ, որոնց անուններն էին միայն լսել: Ու թեև փոքր-ինչ սահմանափակ էին այդ շփումները, այնուամենայնիվ, ռեկտորի կարծիքով, դրանք կարող են նպաստել մեր ծրագրերի ստեղծման և գիտական մտքերի ձևավորման գործին:

Ռեկտորը իր եզրափակիչ խոսքում

նշեց նաև, որ համաժողովի նյութերը, ըստ գիտաճյուղերի, կտպագրվեն առանձին պրակներով:

Համաժողովի օրերին սփյուռքահայ և արտասահմանյան մասնակիցների համար կազմակերպվեցին մի շարք ընդունելություններ ու մշակութային միջոցառումներ: ՀՀ նախագահ Ռ. Քոչարյանը սեպտեմբերի 17-ին ընդունեց համաժողովի մասնակիցների ներկայացուցչական պատվիրակությանը: Հյուրերը ՀՀ նախագահին տեղեկացրին, որ մյուս գիտաժողով հրավիրվում է առաջին անգամ, և հայագիտության հանգուցային հարցերը քննարկելու ու զարգացման ուղիները հստակեցնելու համար Երևան են ժամանել շուրջ 100 արտասահմանյան նշանավոր հայագետներ:

Ուղեունելով գիտաժողովը Հայաստանում անցկացնելու գաղափարը՝ Ռ. Քոչարյանը հայագիտությանը նվիրված համաժողովը համարեց մեկը այն համահայկական լուրջ նախաձեռնություններից, որոնք կոչված են ծառայելու Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման ու հայապահպանման կարևոր գործին: Նախագահի կարծիքով, համաժողովը պիտի շարունակական լինի, և անհրաժեշտ է համակարգված մոտեցում ցուցաբերել քննարկումների արդյունքում բարձրացված բոլոր հարցերին: Երկրի ղեկավարը հույս հայտնեց, որ համաժողովը հնարավորություն կտա մեկտեղելու ջանքերը և մշակելու հայագիտության զարգացման ծրագիր՝ նշելով, որ պետությունն իր աջակցությունը կբերի այդ ծրագրի իրականացման աշխատանքներին:

Հանդիպման մասնակիցները անդրադարձան նաև գիտության, կրթության ու մշակույթի բնագավառներում առկա խնդիրներին:

Նման մի ընդունելություն էլ համաժողովի նախագահների կողմից կազմակերպվել էր սեպտեմբերի 15-ին: Իսկ սեպտեմբերի 16-ին և 19-ին համաժողովի մասնակիցների համար ՀՀ ԳԱԱ և ԵՊՀ նիստերի դահլիճներում տեղի ունեցան համերգներ: ԵՊՀ-ում տեղի ունեցած համերգը, որը հիմնականում կազմակերպվել էր ուսանողներ

րի ուժերով, մեծ տպավորություն թողեց
հյուրերի վրա:

Համաժողովի օրերին սփյուռքահայ և
արտասահմանցի հայագետները եղան Օ-
շականում հարգանքի տուրք մատուցելով
Մերոպ Մաշտոցի շիրմին, ապա այցելե-
ցին Օհանավանք ու Սաղմոսավանք, ծա-
նոթացան միջնադարյան հայ ճարտարա-
պետության այդ հիասքանչ կոթողներին:
Սեպտեմբերի 18-ին նրանք եղան Նորա-
վանքում (Եղեգնաձոր), ծանոթացան Օր-
բելյան իշխանների դամբարանին, դիտե-

ցին միջնադարյան հուշակավոր ճարտա-
րապետ Մոմիկի կերտած կոթողներն ու
բարձրաքանդակները: Վերադարձին հյու-
րերն այցելեցին նաև Խոր Վիրապ:

Սեպտեմբերի 20-ին՝ եզրափակիչ
լիագումար նիստից հետո, գիտաժողովի
մասնակիցները այցելեցին Ծիծեռնակա-
բերդ, պսակներ դրեցին Մեծ եղեռնի զոհե-
րի հիշատակն հավերժացնող հուշակոթո-
ղին, որից հետո եղան Հայոց ցեղասպանու-
թյան թանգարանում:

Վ. Ս. ՄԱՂԱԼԹԱՆ